***

Սահակ ծաղկաբարի ծաղկած կոնդակներից բազմաթիվ օրինակներ մինչև այժմ էլ պահվում են Մատենադարանի արխիվում, որոնց վառ գույները կարող են շարժել ամեն մի նկարչի նախանձը։

Ավելորդ չենք համարում, հավելվածի կարգով ստորև գետեղել ծաղկաբարի խնդրագրերն ու հայտարարությունը, ուղղված Սինոդին, որոնք գտնվում են Սինոդի Տնտեսական մասի 1837 թ. վերոհիշյալ № 9 գործում, թերթ՝ 1, 5, 10, 11, 22։

Այդ խնդրագրերը ցույց են տալիս դեպի թղթի գործարանը և ձեռնարկությունները էջմիածնի ղեկավարության կողմից ունեցած անտարբերությունը, և ծաղկազարդ Սահակ եպիսկոպոսի կողմից գործադրվող ջանքերի անպատասխան մնալը։

Հրապարակվող փաստաթղթերը հետաքրքիր են նաև այն տեսակետից, որ մատնանշում են թղթի պատրաստման համար 19-րդ դարու առաջին կեսում գործադրվող նյութերի, ինչպես նաև Երևանին մոտ գտնվող պղնձի մադաններին և այլ քարահանքերի մասին։

I

Սրբազան սիւնհոդոսի լուսավորչեան աթոռոյ կաթողիկէ էջմիածնի. ի ծաղկազարդ Սահակ եպիսկոպոսէ Մատեոսի տէր Գրիգորեան Երևանցւոյ.

Խ ն դ ի ր

...Ո՛վ սրբազան Հարք. ձեզ քաջ յայտնի են աշխատանք իմ, և զանազան ծառայութիւնք, որ ի մանկութենէս սրբոյ Աթոռոյս և աւուրց յաւուրս յաւելորդութիւնք ի-մոյս պատշաճեալ գործոց շնորհիւն աստուծոյ։ Ըստ իմս կարեաց, որպէս զյօրինելն զնորանշան թուղթս, զպատաշ ասացեալ սպիտակ աղն՝ վասն լուսացման դրեանց տպարանի, զնշշտայն՝ պիտանացուն կապմարարի, զսոսինձն՝ վասն կցանի կոնդակաց, զդալամի ժանգառն՝ վասն ծաղկարարութեան, նմանապէս զդրմդն և զլաջիվարդն. և շնորհիվ սուրբ հոգւոյն Աստուածոյ տակաւին զոն յիս այլ և գաղտնի պիտանացու գիտելիք արհեստին իմոյ և օգտաւէտ ոմանց, զորս չեմ եղեալ յայտնի ի գործ. իհարկէ, պարագայք սորին դրամով բերին ի ձեռս. զի ինքեանք են ծանրագին յոյժ և նիւթք իւրեանց դիւրագին։

Ապաքէն եթէ նորին բարձր սրբազնասուրբ օծութիւն և ձերդ սրբազնութիւն բարեհաճեսցին առ այսոսիկ հրամայեցէ՛ք խմուս նուաստութեան, յաղագս նորոգ յօրինելոյ դիւրին ձևով զգործարանս թղթահանութեան. զի պլան այսր գործարանի ունիմ պատրաստի ի ձեռս. քանզի զաւելորդ հատեալսն ի մամլոյ՝ որք իբր անպիտան արտաքս ընկենուն կղմարարք, կամ փակեթք բարեաղրաց և կամ անպիտան բարեագիրք և տումարք, որ յոմանց ի հուր արկանեն, յոմանց արտաքնոցն թափին և յոմանց տուեալ լինին վաճառանոցն, արդ շնորհիւն Աստուծոյ կարող եմ զայնոսիկ միանգամայն պիտոյացուցանել և յարգել, շինելով զնոսա պիտանի թուղթս և մուխավայս (խաւաքարտ, կարդոն), վասն զանազան դրեանց տպարանի։ Ահա ծաներուք և տեսէ՛ք. սակայն յայտնեսցի եղրակացութիւն խնդրոյս ձերում բարձր սրբազնութեան. զի եթէ բարեհաճեսջիք ի հարկէ ծախսն սոցա պարտի ի գանձարանէ սրբոյ Աթոռոյս լինել։

Այլև խնդրեմ այնպէս ստորագրեալ հրամայեսջիք խմուս նուաստութեան, որ ոչ հիւսն կամ վարպետք և կամ մեքենք զանազան խօսակցութեամբ ասիցեն թէ՝ մեք քան զնա լաւագոյնս կարող եմք յօրինել. ապա թէ ոչ յայնժամ թուլասրտեալ փոխանակ հետևելոյ յետս նահանջիմ և լինիմ այսն կատականաց և նշաւակ բազմաց ըստ տերունական առածին թէ՝ այրս այս կամեցաւ աշտարակ շինել և այլն. քանզի որպէս օգուտ գործարանիս փառք են և պարծանք սրբոյ Աթոռոյս և ձերդ սրբազնութեան, ի հարկէ և նմանապէս և ամօթանք։ Ահա ընտրեցեք զբարին յամանս բարիս, զխոտանն ի բաց ընկեցեք. ծաներուք և տեսէ՛ք և վայելեն ձեր աստուծ-